

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Ուրբաթ 01 Մայիս 2020 - Թիւ 19

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին Էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարան)	7
Միջազգային	8
Պետական փաստաթուղթեր	
Վերջին Էջ	



ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Ուրբաթ 01 Մայիս 2020 - Թիւ 19

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Տեղեկութիւններ

Ցեղասպանութիւնը վերապրած երեք մարդ կ'ապրի Հայաստանի մէջ



ՀՀ աշխատանքի եւ հասարակական հարցերու նախարարութեան հասարակութեան ապահովութեան պետական ծառայութիւնով կենսաթոշակ կը ստանայ ցեղասպանութիւնը վերապրած 3 քաղաքացի: Անոնք են Ռվսաննա Միրխանեանը (1915 թուականի ծնունդ) եւ Մարի Կիրակոսեանը (1908 թականի ծնունդ), Եպրաքսի Գեւորգեանը (1914 թուականի ծնունդ):

Բացայայտելով Արեւմտեան Հայաստանի «անյայտ» լեռները



2014-Էն կ'ուսումնասիրենք ու կը բացայայտենք Հայկական լեռնաշխարհը, նկատի ունինք այն լեռները, որոնք ՀՀ տարածքէն դուրս են: 5-6 օրով կ'երթանք Արեւմտեան Հայաստան: Ստանդարտ տուրերու աշխարհագրութիւնն ինչպիսի՞ն է՝ դէպի Անի, Կարս, Վան, Մուշ, Էրզրում, Բայազետ, որոնք առհասարակ քաղաքներ են, քանի մը պատմական յուշարձաններով: Մեր խումբն այդ ամենը մէկ անգամ տեսնելէ ետք այդ Էջը փակեց. մեզ լեռները կը հետաքրքրէին ավելի շատ:

Սկսեցինք բացայայտել այն լեռները, որոնց մասին ընդհանրապէս տեղեկութիւն չկար: Կոպիտ ըսելով՝ 100 տարի առաջուայ ընդհատուած կապը կրկին վերականգնեցինք լեռներուն հետ: Մարաթուկ, Անդոկ, Ծովասար, Վարագ, Արտոս, Նեմրուժ. այս սարերուն մասին կը հանդիպէինք միայն գրականութեան մէջ, երգերով, բայց չէինք ճանչնար գոնէ մէկ մարդ, որ բարձրացեր էր անոնց վրայ: Օրինակ՝ Վարագավանքի մասին բոլորը գիտէն, կաթողիկոսանիստ վանք եղած է, Խրիմեան Հայրիկն այնտեղ նստեր է, հայերու համար Վարագը սուրբ լեռ կը համարուէր, բայց ոչ մէկը չէր բարձրացած, մենք առաջինն էինք:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ոգեկոչման արարողութիւն՝ Արեւմտեան Հայաստանի անկախութեան եւ Սեւրի պայմանագիրի հարիւրամեակներու յիշատակին. Արժանապատուութեան խնդիր մը



Ժընեւի միջազգային բարեկամութիւններու շրջանակի նախաձեռնութեամբ՝ Արեւմտեան Հայաստանի ազգային խորհուրդի անդամ եւ Արեւմտեան Հայաստանի խորհրդարանի անդամ տիկին Լիդիա Մարկոսեանը 2020 թուականի Փետրուար 10-ին ներկայացուց գիտաժողով, նուիրուած Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներուն եւ Սեւրի Պայմանագիրի հարիւրամեակին:

Տիկին Մարկոսեանը նախ շնորհաւորեց 1920-ին Ազգերու Լիգայի (SDN) կազմաւորման շեմին հիմնադրուած այս ընկերակցութեան հարիւրամեակը՝ “Ժընեւ” ամսագիրի տնօրէն Էդուարդ Չապուխասին կողմէ, որ աշխատանքներ տարած է համախմբելու համար դիւանագիտական, քաղաքական, գիտական, մշակութային, տնտեսական եւ տեղեկատուական աշխարհը՝ Ժընեւեան հասարակութեան հետ:

Տիկին Մարկոսեանը նշեց, որ 2020 թուականը կարելոր տարի մըն է ընկերակցութեան համար, բայց ան կարելոր է նաեւ հայ ազգին համար, քանի որ 2020 թուականին կը նշուի ոչ միայն Արեւմտեան Հայաստանի Անկախութեան հարիւրամեակը, այլեւ Սեւրի Պայմանագիրի ստորագրման հարիւրամեակը:

Այս ելոյթին ընթացքին տիկին Մարկոսեանը քայլ առ քայլ զարգացուց իրաւական եւ պատմական տեսանկիւնէն այն հարցը, թէ ինչպէս եղած է աքսորի իրավիճակը, որուն ենթարկուեր են հայերու մեծամասնութիւնը՝ Արեւմտեան Հայաստանի պետութեան գրաւումէն ետք այնտեղ վերապրած բնակչութիւնը ճնշելով, բան մը, որ 16-րդ դարէն ի վեր Արեւմտեան Հայաստանի գաղութացման հետեւանքով կը շարունակուի:

Տիկին Մարկոսեանը բաւական երկար խօսեցաւ նաեւ այն պայմաններուն մասին, որոնցմով փաստացիօրէն եւ օրէնքով ճակցուեցաւ Արեւմտեան Հայաստանի պետականութիւնը, եւ այն պայմանները, որոնց համաձայն ստորագրուեցաւ Սեւրի պայմանագիրը 1920-ի Օգոստոս 10-ին:

Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող պատերազմներուն մասին լուրերը առիթ տուին քաղաքական կողմին ցույց տալու, թէ Սեւրի պայմանագիրը ինչպիսի պայմանագիր է, որ ոչ միայն դեռ ուժ ունի իր ստորագրումէն 100 տարի անց, այլեւ միաժամանակ իր մէջ կը պահէ տարածաշրջանի խաղաղ ապագան, նաեւ Արեւմտեան Հայաստանի հայ ժողովուրդի արժանապատուութիւնը վերականգնելու ոյժը:

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արցախը Հայաստան Ե եւ վերջ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԵԱՐՀ

Մասշտաբ: 1:4 000 000



ՌԴ Արտաքին գործոց նախարար Սերգեյ Լավրովի յայտարարութիւններէն յետոյ իրական քաղաքականութիւնը կը վերադառնայ Արցախի տարածքային հարցին եւ Ատրպէյջանի հետ սահմանին: Արժէ յիշել, որ 1990-ին Ատրպէյջանը որոշում կայացուց էթնիկապէս ջնջել Արցախի հայ բնակչութիւնը եւ վերադառնալ Բաթումի պայմանագիրի սահմաններուն, որն ստորագրուել է Երեւանի Հայկական Հանրապետութեան կողմէ 1918-ի Յունիս 4-ին:

Արժէ յիշել, որ հայ բնակչութիւնը, իր լաւագոյն ներկայացուցիչներու շարքին, որոշեց դիմակայել Ատրպէյջանական բանակին՝ կանխելու ոչնչացումը, եւ շփոթութեան մատնեց Ատրպէյջանի ողջ ռազմական մեքենային՝ այդպիսով ալ կիրառելով իր ինքնորոշման իրաւունքները::

Կարիք չկայ ըսելու, որ Ատրպէյջանի կողմէ 1994-ի Մայիս 12-ին կնքուած զինադադարի գործողութենէն ետք ալ, անոր բանակը սպաննած է հարիւրաւոր երիտասարդ հայ զինուորներ, որոնց յանձնարարուած էր պաշտպանելու բաժանարար գիծը:

Հարցը կը մնայ եւ կը մնայ ամբողջովին օրինական, արդեօ՞ք ՄԱԿ-ի բանաձեւերը, արդեօ՞ք Մադրիդեան սկզբունքները կամ Կազանի արձանագրութիւնը աւելի շատ իրաւական կշիռ ունին, քան Սեւրի պայմանագիրի պայմաններն ու հայ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը:

1920-ի Ապրիլն էր, եւ Սան Ռեմոյի վեհաժողովի ընթացքին գործ ունեցանք ղարաբաղեան ինտիլիին հետ: Ամփոփելով, հիմնական Դաշնակից ուժերը յայտարարեցին, որ Ղարաբաղը Արեւմտեան Հայաստանի տարածքին 1920-ի հայկական պետութեան բաղկացուցիչ մասն է, եւ նոյնիսկ ճանչցուեցաւ դէ ֆակտո, ապա 1920 թուականի Մայիս 11-ին դէ յուրէ:

Այս ամենը վերստին յայտնուեցաւ Սեւրի պայմանագիրի 92-րդ յօդուածին մէջ.

Յօուած 92 — *Ատրպէյջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանները ըստ պատկանելւոյն կ'որոշուին շահագրգիռ պետութիւններու ընդհանուր համաձայնութեամբ:*

Երբ 89-րդ յօդուածով նախատեսուած որոշումն արդէն ընդունուած կ'ըլլայ, եւ եթէ անկէ ետք այս կամ այն շահագրգիռ պետութիւնները չեն կրնար ընդհանուր համաձայնութեամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կ'որոշեն գլխաւոր դաշնակից տերութիւնները, որոնք ատոր հետ միասին պետք է հոգ տանին սահմանազատումը տեղւոյն վրայ գծանշելուն մասին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

Այս կապակցութեամբ կ'ուզեմ յիշեցնել նաեւ, որ ես Արեւմտեան Հայաստանի անունով վաւերացուցեր եմ 2016 թուականի Յունիս 24-ի Սելիի պայմանագիրը, ինչը շատ յստակ կը նշանակէ, որ Արեւմտեան Հայաստանի համար հարցեր չկան, Արցախի տարածքային հարց նույնպէս չկայ, կայ միայն մէկ հարց՝ մեր պետութեան եւ Ատրպէյջանի միջեւ սահմանազատման վերաբերեալ: Միջազգային իրաւունքով՝ Արցախի հարցը ինդիք էր, որ լուծուեցաւ 1920 թ.-ին՝ Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է:

Այնուամենայնիւ, Արցախի տարածքները, օրինակ Քարվաճառի եւ Լաչինի շրջանները, ազատագրուեցան 1993 թուականի Ապրիլ 1-ին գնդապետ Յովսէփ Յովսէփեանի իրամանատարութեամբ Ազատագրական բանակի մարտիկներուն կողմէ, որոնք կազմուած էին նաեւ կամաւորներէ՝ Արեւմտեան Հայաստանէն:

Սա կը նշանակէ, որ այդ տարածքները օրինականօրէն կրնան ըլլալ Արեւմտեան Հայաստանի այն տարածքները, որոնք ազատագրուեր են հայ զինուորներու, այդ թուին՝ Արեւմտեան Հայաստանի մարտիկներուն կողմէ:

Մենք յստակ սահմանեցինք այն տարբեր հատուածները, որոնք առկայ են հայ հասարակութեան մէջ, ներառեալ Երեւանեան կեդժ մտաւորական հատուածը, որ կը խաղայ նիւթապաշտական թելի վրայ՝ ցանկանալով Արեւմտեան Հայաստանը յանձնել Թիւրքիային: Այսպիսով, մէկ անգամ եւ ընդմիշտ Արեւմտեան Հայաստանը կը պարզաբանէ այս հարցը: Արեւմտեան Հայաստանը ոչ դրամավարկային, ոչ առետրային կամ այլ գործարքներու առարկայ չի դառնար, այդպիսի առարկայ չի կրնար դառնալ նաեւ Արցախը:

Թիւրքիան այս հարցով շատ պարտքեր ունի Արեւմտեան Հայաստանին, եւ այդ պարտքերը տարեցտարի կ'անձին: Թիւրքիոյ պարտքերը չեն սակարկուիր:

Միացեալ Նահանգներն ու Եւրոպան յստակ ձեւակերպեր են հայկական տարածքներու անկախութեան վերաբերեալ իրաւական պարտաւորութիւններ եւ պարտականութիւններ, ամեն ինչ կախուած կ'ըլլայ հայ ազգէն՝ Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը կիրառելու իր վճռականութենէն, ինչպէս Արցախի, այնպէս ալ ամբողջ Հայաստանի տարածքին: Ընդհանրապէս այդ պատճառով է, որ որոշ պետութիւններու կողմէ ղեկավարուող ուժեր կը փորձեն բաժնել հայ հասարակութիւնը, որպէսզի ան չկարողանայ կեդրոնանալ իր գոյութեան էութեան, ինքնիշխանութեան եւ անկախութեան վրայ:

Այս ուժերը կը ցանկանան բաժնել ոչ միայն հայ հասարակութիւնը, այլեւ հայկական տարածքները՝ ենթադրելով, որ կայ քաղաքական առաջնահերթութիւն, բայց փաստօրէն Արցախեան հիմնահարցը կապուած է Արեւմտեան Հայաստանի ինդիքին հետ, մէկ խօսքով՝ Հայաստանի անկախութեան հարցը, որպէս ամբողջութիւն՝ անբաժանելի է, եւ անբաժանելի է իր իրական տարածքներէն:

Հետեւաբար անհրաժեշտ է ըլլալ հետեւողական, որեւէ անձի եւ (կամ) կառույցներու պարագային, որ կասկածի տակ կը դնեն եւ կը խախտեն Արեւմտեան Հայաստանի անքակտելի իրաւունքները եւ Հայաստան պետութեան անբաժանելիութիւնը. ես չեմ խօսիր միայն Հայաստանի Հանրապետութեան մասին, անոնք բնիկ հայ ժողովուրդի համակարգուած ոչնչացման զինուած ձեռքերն են, քանի որ երկարաժամկետ հեռանկարին մենք միշտ կը վճարենք մեր երեխաներու թափած արիւնով:

Այնուամենայնիւ, ես անելի շատ ուշադրութիւն կը դարձնեմ հայ ժողովուրդի, եւ մասնաւորապէս, հայ ժողովուրդի զինուորական հատուածի ձայնին եւ վճռականութեան, քան որոշ դիւանագետներու կամ քաղաքական գործիչներու յայտարարութիւններուն: Ես կը ցանկանայի, որ իմ հաղորդագրութիւնս ճիշտ ընկալուէր: Պարզ է, մենք թոյլ չենք տար, որ որեւէ մէկը մեր փոխարէն որոշէ մեր պետութեան ապագան, մեր ազգային անվտանգութիւնը, մեր անկախութիւնը եւ ինքնիշխանութեան հարցերը: Մենք օրինական ենք եւ գիտենք այդ, այս օրերուն մենք կը յիշենք մեր մեծերու անկարագրելի զոհաբերութիւնն ու տառապանքը, մենք մեր ժողովուրդի մարտական սերունդի մէկ մասն ենք եւ գիտենք որ մեր առաքելութիւնը դեռ ավարտուած չէ:

Նախագահական Հրամանագիր



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահական հրամանագիր

N°76 – 2020.04.15

Անդրադառնալով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի տնտեսական հարցերով խորհրդականի պաշտօնի ստեղծման, նշանակման եւ ազատման.

Հանրապետութեան նախագահը՝

Հաշուի առնելով Սահմանադրութեան 76-րդ յօդուածը

Հաշուի առնելով Սահմանադրութեան 82-րդ յօդուածը՝

Հրամանագիրը կը հաստատէ այն դրոյթները, որոնք կը վերաբերին պետութեան նախագահի խորհրդականի բոլոր գործառնոյթներուն:

Հրամանագիր:

Յօդուած 1- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի տնտեսական հարցերով խորհրդականի գրասենեակի ստեղծում.

Յօդուած 2 — Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան տնտեսական հարցերով խորհրդականին պաշտօնի նշանակումը կամ պաշտօնէն ազատումը կը կատարուի Նախագահի որոշմամբ:

Յօդուած 3 — Հրամանագիրը կը հրապարակուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական տեղեկագիրով եւ ոյժի մէջ կը մտնէ հրապարակման օրէն սկսեալ:

Կարին, 15 Ապրիլ 2020

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

2020 թուականի Ապրիլի 24-ին նուիրուած արարողութիւններ



Յարգելի հայրենակիցներ,

Այսօր պետք է ուղերձ յղեմ ձեզի՝ կապուած Ապրիլի 24-ի արարողութիւններուն հետ, որոնք այս տարի պետք է տեղի ունենային ամբողջ աշխարհով, ներառեալ Արեւմտեան Հայաստանի մէջ:

Իսկապէս, աշխարհը ներկայիս կը հանդիսանայ համաճարակի զոհ, որն վարակային աղետի վտանգէն պաշտպանուելու համար, կասկածի տակ կը դնէ հաւաքական արարողութիւնները՝ ի յիշատակ 1894 թուականէն մինչեւ 1923 թուական Արեւմտեան Հայաստանի մէջ թիւրքիոյ երեք յաջորդական կառավարութիւններուն կողմէ իրականացուած ցեղասպանութեան զոհերուն:

Սակայն, հաւաքական արարողութիւններու կազմակերպման արգելքը չի նշանակեր, որ մենք չենք կրնար մեր յարգանքի տուրքը մատուցել զոհերու յիշատակին անհատական հիմքերով:

Արդէն քանի մը տասնամեակէ ի վեր որպէս յիշատակի արարողութեան մաս, շատ հայեր Ապրիլի 24-ին ծով կը պահեն: Այս գործողութիւնը ցոյց կուտայ նաեւ ուժեղ ազգային համերաշխութիւնը, եթէ ան կը կատարուի մեծ թիւով մարդոց կողմէ:

Ուստի, մեր ցաւը մեր նախնիներու տառապանքներուն հանդէպ արտայայտելու համար կայ երկու եղանակ. առաջինը արտաքին եւ նիւթական մեթոդն է՝ համաշխարհային տարածման միջոցով արտայայտելու մեր ժողովուրդի ցեղասպանութիւնէն ետք արդարութեան մեր ծարաւը, իսկ միւսը՝ ներքին ու հոգեւոր մեթոդն է, ծոմապահութեան եւ խոկումի միջոցով:

Անկախ ընտրուած մեթոդէն, դուք կրնաք տեսնել, թէ ինչպէս ողջ տարուան ընթացքին, ամբողջ աշխարհով՝ ներառեալ Արեւմտեան Հայաստանի մէջ, հայ ժողովուրդը կ'արթննայ եւ կը պատրաստուի իր պահանջները ներկայացնելու յանուն ինքնիշխան եւ անկախ Արեւմտեան Հայաստանի:

Այս տարի Ապրիլի 24-ը մաս կը կազմէ Սեւրի պայամանագիրի հարիւրամեակին, եւ մեր ընդհանուր մտայնութեան մէջ պարզ է, որ մենք կրնանք հասնիլ յիշատակման՝ որուն արժանի է Արեւմտեան Հայաստանի հայ ազգը:

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան)

Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Ցաւակցութիւնները



Մենք խոր ցաւով իմացանք պարոն Պիեռ Թիլբեանի յանկարծակի մահուան գոյժը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ օր՝ Ապրիլ 17-ին: Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի անունով՝ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք անոր ընտանիքին եւ ընկերներուն:

Ան Արեւմտեան Հայաստանի որդին էր, արմատներով Մարաշէն: Պարոն Պիեռ Թիլբեանը 2018 թուականի Մարտ 24-ին արարողութեան մը ընթացքին դարձաւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացի, երբ անոր յանձնուեցաւ իր պաշտօնական անձնագիրը: ԱՆ կատարելապէս ըմբռնած էր Մայր հայրենիքին զինուորագրուելու ամբողջ խորհուրդը, եւ հասկցած էր, որ ամբողջ հայութեան փրկութեան վերջին հնարաւորութիւնը Արեւմտեան Հայաստանի վերականգնման ուղին էր, զոր ան ընտրեց եւ որուն հետեւեցաւ:

Ան նաեւ սրտանց ու իր ամբողջ աւիւնով մասնակցեցաւ Լիոնի Արեւմտեան Հայաստանի հայերու համագումարի հանդիպումներուն, որուն անդամն էր:

Պիեռ Թիլբեանի յիշատակը կենդանի պիտի մնայ սերունդներու գիտակցութեան մէջ՝ անոր յաւերժական օրինակելիութեան պատճառով:

Պարոն Լեոնարդո Պասմաճեան՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահ.

Տիկին Լիդիա Մարկոսեան՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի փոխնախագահ

Լիոն, 19 Ապրիլ, 2020 թ.

Սան Ռեմոյի վեհաժողովի 100 ամեակը



ԱՐԵՎՄԵՆԱՆ ՀԱՅՅԱՍՏԱՆ — Հայերու եւ Արեւմտեան Հայաստանի ժամանակակից պատմութիւնը հարթուած է յանցագործութիւններով, ցաւով, տառապանքներով, բայց ան նաեւ հարթուած է արդարութեամբ, ազատութեամբ եւ խաղաղութեամբ:

Լոկոյնի մէջ ընդունուած որոշումներուն համաձայն՝ հիմնական չորս յաղթական դաշնակից Տերութիւններու կառավարութիւններու ղեկավարները, յանձինս Բրիտանիոյ Վարչապետ Լոյդ Ջորջի, Ֆրանսսան ներկայացնող Խորհուրդի նախագահ Ալեքսանդր Միլերանդի, Իտալիան ներկայացնող Խորհուրդի նախագահ Ֆրանչեսկո Նիտտիի, եւ Ճապոնի դեսպան Կեիչիիո Սացուկիի՝ որոշեցին հանդիպիլ Իտալիոյ մէջ:

Միջազգային վեհաժողովի հանդիպումը կայացաւ 1920 թ.-ի Ապրիլ 18-էն 26-ը, Իտալիոյ ծովափնեայ Սան Ռեմո քաղաքի «DEVACHAN Ամրոց»-ին մէջ, որ ծնունդ տուաւ Խաղաղութեան Միջազգային Պայմանագիրին (Սեւրի պայմանագիր)՝ Թիւրքիոյ եւ Դաշնակից տերութիւններուն եւ վերջիններուն միացած ոյժերուն միջեւ (որոնց կը ներկայացնէր Ֆրանսայի Գերագոյն Խորհուրդի նախագահը), որով Արեւմտեան Հայաստանի տարածքին դէ յուրէ ճանչցուեցաւ Հայաստանի Հանրապետութեան իրողութիւնը 1920 թուականի Մայիս 11-ին (2020 թ.-ի Մայիս 11-ին Ֆրանսայի մէջ կազմաքանդումն սկսելու ամսաթիւը պատահականութիւն չէ):



1920 թ.-ի Ապրիլ 18-ին, ժամը 11:00-ին՝ բանավեճերուն գերակշռեցին երկու մտահոգութիւններ, ուր վերսայլեան Պայմանագիրի իրականացումը մնաց առանցքային: Պայմանագիրը ստորագրուեցաւ, մնաց զայն կիրառելու հարցը: Չայն վերանայելու որեւէ գաղափար՝ պետք է պաշտօնապէս բացառուած ըլլայ: Գերմանիոյ եւ Թիւրքիոյ կառավարութիւնները ըստ ժամանակացոյցի չկատարեցին իրենց ստանձնած պարտաւորութիւնները, որով պատերազմի «յանցագործները» պիտի յանձնէին, զինաթափուէին եւ վերանորոգման համար փոխհատուցումներ կատարէին: Խնդիրին ուշադրութիւն կը դարձնեն միայն այն ժամանակ, երբ ռազմական պատժամիջոցներ կիրառելու որոշում մը կ'առնուի, որն արգելք կը հանդիսանայ այս նիւթին շուրջ Գերմանիոյ կառավարութեան հետ երկխօսելուն: Միւս կողմէ, Թիւրքիոյ հետ կնքուած պայմանագիրին համար կը մնար յստակեցնել տարածքային սահմաններու հովանաւորումը՝ համաձայն 1920-ի Փետրուարին Լոնդոնի վեհաժողովին ընդունուած որոշումներուն, ուր ի վերջոյ Մեծ Բրիտանիան էր, որ ստացաւ Պաղեստինի եւ Իրաքի հովանաւորումը, Ֆրանսային յատկացուեցան Սուրիան եւ Լիբանանը, սա ուղղուած էր Մոսկուի եւ Զիւրիքիստանի նաւթի հարցերուն:

Հայաստանն ու Պաղեստինը հաւասարապէս հանդիսացան քննարկման շատ զգայուն կողմեր:

1920 թ.-ի Ապրիլ 19-ին, ժամը 11:00-ին՝ կառավարութիւններն սկսեցան բարձրացնել Հայաստանի հարցը (Արեւմտեան Հայաստանի տարածքին), նախագահ Վուդրօ Ուիլսոնի կողմէ 1920 թ.-ի Մարտ ամսի 24-ին Ֆրանսայի դեսպանատան պետքարտուղար պարոն ժիլսսերանդին ուղարկուած նամակի ընթերցումէն ետք:

Օրակարգը կը վերաբերուէր Խաղաղութեան պայմանագիրը օսմանեան կառավարութեան յանձնելու խնդիրին: Որոշուեցաւ, որ օսմանեան պատուիրակութիւնը Մայիսի 10-ին պետք է կանչուէր Փարիզ (այժմ մենք գիտենք, որ պայմանագիրի յանձնումը տեղի ունեցաւ 1920 թ.-ի Մայիս 11-ին):

Ինչ կը վերաբերի Խաղաղութեան պայմանագիրը Թիւրքիային պարտադրելու միջոցներուն՝ ապա որոշուեցաւ, որ ռազմական ու ռազմածովային փորձագետները հանդիպին յաջորդ առաւօտ՝ 1920 թ.-ի Ապրիլ 20-ին, Մարշալ Ֆոշի նախագահութեան ներքոյ:

Կառավարութիւնները պատասխան նամակ պատրաստեցին՝ ուղղուած Նախագահ Վուդրօ Ուիլսոնի գրասեան:

Այդ օրն իսկ քննարկուեցան նաեւ Թիւրքիոյ հետ պայմանագիրի ֆինանսական դրոյթները:

Հայաստանին հարակից Զիւրիքիստանի հարցը քննուեցաւ հանդիպման աւարտին, երբ բրիտանական պատուիրակութիւնն առաջարկեց Զիւրիքիստանին վերաբերող յօդուածներու փոփոխուած մէկ տարբերակը:

1920 թ.-ի Ապրիլ 20-ին, ժամը 11:00-ին, կառավարութիւնները շարունակեցին ուսումնասիրել Թիւրքիոյ հետ պայմանագիրի ֆինանսական դրոյթները եւ պատմութեան մեջ առաջին անգամ խօսակցութիւն եղաւ օգնելու Հայաստանին (Օսմանեան կայսրութեան կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստանի տարածքը): Սակայն զարմանալի էր, որ Հայաստանին տրուելիք հնարաւոր օգնութեան հարցը անտեսուեցաւ Ազգերու Լիգայի Խորհուրդին կողմէ:

Այդ օր երեք հարց բարձրացուեցաւ, առաջինը՝ ֆինանսական միջոցներն էին, որպէսզի նոր Պետութիւնը կարողանար ապրիլ, երկրորդը՝ ռազմական միջոցներն էին, որոնցմով ան հնարաւորութիւն կ'ունենար պաշտպանուելու, երրորդը՝ ուղղուած էր Հայաստանի ծովային ելք ունենալուն:

Խօսակցութիւն բարձրացաւ նաեւ՝ ըստ Ազգերու Լիգայի Խորհուրդի յուշագիրին ուսումնասիրելու Թիւրքիոյ մէջ գտնուող փոքրամասնութիւններու պարագան:

Կէսօրէ ետք, Մարշալ Ֆոշի ներկայացմամբ որոշուեցան այն միջոցները՝ որոնցմով Թիւրքիային պիտի պարտադրուէր Խաղաղութեան Պայմանագիրը, որպէսզի պաշտպանուէր Հայաստանը:

1920-ի Ապրիլ 21—ին, ժամը 11:00-ին, Մարշալ Ֆոշի եւ կառավարութիւններու ներկայութեամբ շարունակուեցաւ ռազմական, ռազմաճովային եւ օդային դրոյթներուն հարցը:

Այս օրը որոշուեցաւ Օսմանեան պատուիրակութեան հրահրման ամսաթիւը եւ Պայմանագրի VII (7) բաժիններու ուսումնասիրութիւնը՝ կապուած Եգիպտոսի, Սուդանի, Կիպրոսի, Մարոկի, Թունիսի եւ Թիւրքիոյ յետագայ սահմաններուն վերաբերեալ:

1920-ի Ապրիլ 22-ին, ժամը 11:00-ին, շարունակուեցաւ Թիւրքիոյ ապագայ սահմաններուն հարցը, մասնաւորապէս՝ Էրզրումի վիլայէթի հարցը:

Այդ օրուայ քննարկումներուն ներկայ էր նաեւ Պօղոս Նուբար փաշան՝ իր յուշագիրը ներկայացնելու համար:

Պօղոս Նուբար փաշայի խումը վճռորոշ էր Արեւմտեան Հայաստանի տարածքներուն հարցով: Այսպիսով, միջազգային իրաւունքի տեսանկիւնէն, Սան Ռեմոյի վեհաժողովի ճիշդ այս որոշումը երբեւէ չեղեալ չհամարուեցաւ, որն իսկապէս իրաւական կարգավիճակ ունի, եւ բնականաբար կը գերազանցէ միւս բոլոր պայմանագրերը, որոնք կրնային տեղի ունենալ առանց Արեւմտեան Հայաստանի մասնակցութեան:

1920-ի Ապրիլ 23-ին, ժամը 11:00-ին, կառավարութիւնները լսեցին պարոն Ահարոնեանին: Արեւմտեան Հայաստանի իրաւական կարգավիճակը ամրապնդուեցաւ Երեւանեան Հայկական Հանրապետութեան պատուիրակութեան ղեկավար պարոն Ահարոնեանի առանձին լսմամբ:

Հայաստանի ներկայացուցիչներու լսումներէն յետոյ որոշում կայացաւ Հայաստանի մայրաքաղաքի կարգավիճակը վերագրելու Էրզրում քաղաքին (Կարին):



1920-ի Ապրիլ 24-ին, ժամը 11:00-ին, կրկին քննարկուեցաւ Թիւրքիոյ եւ Հայաստանի սահմաններու հարցը՝ Միացեալ Նահանգներուն կողմէ նշանակուած արբիտրին կողմէ այդ հարցը լուծելու որոշմամբ, եւ որ երկու կողմերը կը պարտաւորուին ընդունիլ անոր կայացուցած որոշումը:

Նաեւ որոշում կայացաւ հայցելու նախագահ Վուդրօ Ուիլսոնին: Այս օրը պարզաբանուեցաւ, որ Թիւրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի հարցը կապուած է միայն Թիւրքիոյ կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստանի տարածքներուն հետ, այլ ոչ թէ Ռուսաստանին պատկանող տարածքներու:

Նաեւ քննարկուեցաւ հովանաւորողներուն վերաբերեալ հարցն ու Պաղեստինի խնդիրը:

1920-ի Ապրիլ 25-ին, ժամը 11:00-ի դրութեամբ, հովանաւորողներու հարցը շարունակուեցաւ ամբողջ առաւօտեան, եւ եղան յետագայ խորհրդակցութիւններ՝ Թիւրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմաններուն վերաբերեալ:

Որոշում ընդունուեցաւ Նախագահ Ուիլսոնին որպէս արբիտր միջնորդելուն մասին, եւ որ Թիւրքիան, Հայաստանը եւ միւս Պայմանաւորուող կողմերը համաձայն են սահմաններու հարցը փոխանցելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահին:

Կիլիկիոյ մէջ տեղի ունեցած կոտորածներուն հարցը բարձրացուեցաւ կառավարութիւններուն կողմէ:

1920-ի Ապրիլ 26-ին, ժամը 11:00-ին, նոյն օրը հնարաւոր եղաւ վերջնական դարձնել Թիւրքիոյ հետ խաղաղութեան պայմանագիրի համար ընդունուած որոշումները: Կեսօրէն ետք Կոստանդնուպոլիսէն Իտալիոյ Գերագոյն յանձնակատարի հեռագիրն արդէն կը յայտնէր թրքական պատուիրակութեան այն անդամներուն մասին, որոնք 1920-ի Մայիս 10-ին պիտի մեկնէին Փարիզ:

Այսպիսով ստեղծուեցաւ Արեւմտեան Հայաստանի պետութեանը, որ 15 օր անց դէ յուրեւ ճանչցուեցաւ Թիւրքիոյ կողմէ եւ Դաշնակից ու անոնց կցուած տէրութիւններուն կողմէ՝ Դաշնակիցներու Գերագոյն խորհուրդի անդամներուն կողմէ:

Կոչ կ'ընեմ ամբողջ աշխարհի հայերուն՝ իմանալու այս պատմական ճշմարտութիւնը, զոր ձեզի ներկայացուցի, ան եզակի է պատմութեան մէջ:

Սա ձեզմէ թաքցուած էր մէկ դար, որպէսզի խանգարէ ձեզ պահանջելու ձեր իրաւունքները, որոնք անքակտելի են որպէս պետութիւն, որ ճանչցուեր է այս աշխարհի ամենամեծ տէրութիւններուն կողմէ: Մէկ դար շարունակ, ոչ մէկ հետազօտութիւն չէ եղած իրականութեան մէջ՝ պատմական այս փաստերը ձեզի փոխանցելու համար:

Սան Ռեմոյի վեհաժողովը դարեր շարունակ պիտի ըլլայ եւ մնայ Արեւմտեան Հայաստանի Պետութեան ճանաչման հիմքը, զոր պաշտպանած է Նորին Գերագանցութիւն Պօղոս Նուբար փաշան:

Քաղաքական ուժերը ձեզ մէկ դար շեղեր են ձեր իրական քաղաքական եւ իրաւական Նախագիծէն՝ պետութիւններու կողմէ ձեր տառապանքի (ցեղասպանութեան) յաւերժ ճանաչման վրայ, մինչդեռ ձեր իրական պայքարը պետք է ըլլայ ձեր իրաւունքներու կիրառումը, որոնք ճանչցուած են աշխարհի ամենամեծ տէրութիւններուն կողմէ:

Անոնք հայերու իրաւունքները վերածեր են «Հայկական հարցի», անոնք հայերու դէմ կատարուած ցեղասպանութիւնը վերածեր են «հայկական ցեղասպանութեան», մինչդեռ սա թրքական է: Անոնք մեզ ստիպեցին հաւատալէ ցեղասպանութեան ճանաչման եւ ատոր ժխտողականութեան՝ կեղծելով այդ յանցագործութիւններու ամսաթիւերը, յանցագործութեան վայրը եւ յանցագործներու իրական ինքնութիւնը:

Անոնք նոյնիսկ կը պնդէին, որ Սելի պայմանագիրը փոխարինուեր է Լոզանի պայմանագիրով, անենք կ'ուզէին մեզ մոլորեցնել, բայց այդ այլեւս իրենց չի յաջողիր:

Ոչ մէկ բանի համար ալ ուշ չէ, մենք դեռ կրնանք եւ յատկապէս այս տարի, բոլորս միասին շարունակել այս իրական պայքարը արդարութեան հասնելու համար:

Այնուամենայնիւ, յարգելի հայրենակիցներ, կը խնդրեմ ձեզի, որ զգուշանաո գրագողութենէն, աչքակապութենէն, կեղծարարներէն, անոնցմէ, ովքեր կը ցանկանան ձեզ շեղել ձեր իրական պայքարէն, եւ յատկապէս անոնցմէ, որոնք կը խօսին մեր անունով՝ Արեւմտեան Հայաստանի, սա ազգային անվտանգութեան հարց է:

Կեցցե՛ հայ ժողովուրդը

Կեցցե՛ Արեւմտեան Հայաստանը

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

[http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/Le Monde illustre-01.05.1920.pdf](http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/Le_Monde_illustre-01.05.1920.pdf)

Ֆրանսական դիւանագիտական փաստաթուղթեր — 1921



Ուրբաթ 01 Մայիս 2020 - Թիւ 19

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

Օժանդակեցեք Արեւմտեան Հայաստանը

WESTERN ARMENIA FOUNDATION

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS